ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ
ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՀՈՒՆԱՆՅԱՆ ՆԵԼԼԻ ՎԱՆԻԿԻ

ԼՈԳՈՊԵԴԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՎԱՂ ՄԱՆԿԱԿԱՆ ԱՈՒՏԻԶՄՈՎ ԵՐԵԽԱՆԵՐԻ ՀԱՂՈՐԴԱԿՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ

**ԺԳ 00.01 - «Մանկավարժության տեսություն և պատմություն»
(Հատուկ մանկավարժություն) մասնագիտությամբ
մանկավարժական գիտությունների թեկնածուի
գիտական աստիճանի հայցման ատենախոսության**

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ – 2019

Ատենախոսության թեման հաստատվել է Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանում:

Գիտական ղեկավար՝ Մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ Ս. Գ. Կարապետյան

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ Մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Մ. Մ. Մանուկյան

Մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ, Ա. Վ. Մանուկյան

Առաջատար կազմակերպություն՝ Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարան

Ատենախոսության պաշտպանությունը կկայանա 2019թ. նոյեմբերի 28-ին՝ ժամը 12.00, Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանում գործող ՀՀ ԲՈԿ-ի «Մանկավարժություն» 020 մասնագիտական խորհրդում:

Հասցե՝ 0010, ք. Երևան, Տիգրան Մեծի 17:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2019թ.հոկտեմբերի 18-ին:

Մասնագիտական խորհրդի
գիտական քարտուղար,
մանկավարժական
գիտությունների թեկնածու, դոցենտ՝ Թ. Յու. Ազատյան

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Թեմայի արդիականությունը: Վերջին տարիներին հասարակության շրջանում լայն տարածում և ինչեղություն է ստացել «աուտիզմ» հասկացությունը: Մարդկության կողմից ցուցաբերվող նման հետաքրքրասիրությունը, ինչպես նաև ընտրված թեմայի կարևորությունը, պատահական չէ, քանի որ աշխարհում տարեցտարի մեծանում է նման ախտորոշմամբ երեխաների թիվը (Ն.Պետրովա, 2010, Ս.Գրինսպեն, Ս.Ուիդեր, 2013, Ա.Հ.Սվաջյան, Ա.Տ.Մանուկյան, 2015 և այլք): Լույս աշխարհ են գալիս չբացահայտված և յուրօրինակ, ինքնատիպ վարքով երեխաներ, որոնք զուրկ են շրջապատող մարդկանց հետ շփվելու, հաղորդակցվելու կարողությունից (Ն.Վ.Հունանյան, 2013):

Մանկական աուտիզմի գրանցվող հաճախականությունը հաճախ կախված է լինում նրանից, թե ինչպես է այն որոշվում և ախտորոշվում (Վ.Ե.Կագան, Դ.Ն.Իսաև, 1976, Կ.Սուդի, 1964, Վ.Լոտտեր, 1967, Լ.Վինգ, 1976, Մ.Յ.Վեդենինա, Ի.Ա.Կոստին, Ս.Ս.Մորոզովա, Օ.Ն.Օկունևա, 1998, Կ.Գիլբերտ, Տ.Պիտերս, 2005, Ի.Ի.Մամայչուկ, 2007, Ս.Գրինսպեն, Ս.ՈՒիդեր, 2013): Ըստ Համաշխարհային առողջապահական կազմակերպության տվյալների աուտիզմի հաճախականությունը կազմում է 1:160, ընդ որում աուտիզմ ունեցող երեխաների թիվն ամեն տարի ավելանում է 10-17-ով (http://www.who.int/mental_health/women_children/autism_meeting_report.pdf?ua=1192.):

Հայտնի է, որ վաղ մանկական աուտիզմ ունեցող երեխաների խոսքային գործընթացն ունի ինքնատիպ և ախտաբանական զարգացում (Վ.Վ.Կովալյով, 1985, Լ.Գ.Նուրիևա, 2006, Ե.Մ.Մաստյուկովա, Ա.Գ.Մոսկովկինա, 2004, Ս.Հ.Սուքիասյան, Ս.Պ.Մարգարյան, 2006, Ֆ.Ապպե, 2006 և այլք): Խոսքային գործընթացում առկա դժվարությունները, ինչպես նաև հաղորդակցվելու ցանկության բացակայությունը, դրսևորվում են դեռևս վաղ տարիքից և պահպանվում են այս երեխաների ամբողջ կյանքի ընթացքում (Է.Մեշ, Դ.Վուլֆ, 2003): Հետևաբար լոգոպեդական աշխատանքների վաղ կազմակերպումը, ինչպես նաև դրանց առանձնահատկությունների վեր հանումը, հատկապես կարևորվում են այն հանգամանքով, որ խոսքային գործընթացի, ինչպես նաև ինտելեկտի զարգացման մակարդակի առկայության ցուցանիշներից է կախված այս երեխաների սոցիալական հարմարվողականության ենթարկվելու հավանականությունը (Օ.Ս.Նիկոլսկայա, Ե.Ռ.Բայենսկայա, Մ.Մ.Լիբլինգ, Ի.Ա.Կոստին, Մ.Յ.Վեդենինա, Ա.Վ.Արշատսկի, Օ.Ս.Արշատսկայա, 2005):

Ատենախոսական աշխատանքում ներկայացված վաղ մանկական աուտիզմի հիմնախնդիրը մանկական հոգեբուժության, հատուկ հոգեբանության, բուժական և շտկողական մանկավարժության բնագավառներում դարաշրջան է կազմում (Ա.Ն.Գվոզդև, 1961, Կ.Գիլբերտ, Տ.Պիտերս, 2005): Թեև այդ ժամանակահատվածում շատ հետաքրքիր տեսագործնական աշխատանքներ են ի հայտ եկել, սակայն, դրանք հիմնականում նվիրված են վաղ մանկական աուտիզմի կլինիկական և հոգեբանական տեսանկյուններին, մինչդեռ մանկավարժական մեթոդական մոտեցումները գրեթե ուսումնասիրված չեն (Մ.Յ.Վեդենինա, Ի.Ա.Կոստին, Ս.Ս.Մորոզովա, Օ.Ն.Օկունևա, 1998, Ա.Վ.Խաուստով, 2005 և այլք):

Հետազոտության արդիականությունը ակնհայտ է դարձնում նաև այն փաստը, որ առ այսօր գրեթե չկան լոգոպեդական աշխատանքների առանձնահատկությունների վերաբերյալ ինչպես նաև վաղ մանկական աուտիզմ ունեցող երեխաների հաղորդակցման զարգացմանը նպաստող մայրենի լեզվով մշակված հատուկ մանկավարժական մոտեցումներ, մեթոդներ, միջոցներ, որոնք կարող են նպաստել այս երեխաների հետ տարվող լոգոպեդական աշխատանքների իրականացմանը, հետևաբար, նաև այս երեխաների հաղորդակցման գործընթացի զարգացմանը:

Լոգոպեդական աշխատանքների առանձնահատկությունների ուսումնասիրումը վաղ մանկական աուտիզմ ունեցող երեխաների հաղորդակցման գործընթացում առաջնային ուսումնասիրման ենթակա խնդիրներից մեկն է նաև այն առումով, որ զարգացման այս յուրահատուկ խանգարումը դեռևս բավարար չափով ուսումնասիրված չէ (Ե.Ա.Յանուշկո, 2004, Տ.Պ.Շամխարյան, Վ.Վ.Պողոսյան, 2009): Այս ուղղությամբ իրականացված ցանկացած լոգոպեդական տեսագործնական հետազոտություն կարևոր նշանակություն կարող է ունենալ այս երեխաների խանգարված հաղորդակցման գործընթացի վերականգնման կամ հաղթահարման ուղղությամբ:

Հետազոտության նպատակն է ուսումնասիրել վաղ մանկական աուտիզմ ունեցող երեխաների հաղորդակցման գործընթացը ձևավորող և զարգացնող լոգոպեդական աշխատանքների առանձնահատկությունները և մշակել լոգոպեդական մեթոդներ, միջոցներ, ինչպես նաև ստեղծել հատուկ պայմաններ:

Հետազոտման օբյեկտն է վաղ մանկական աուտիզմ ունեցող երեխաների հաղորդակցման կարողությունների ձևավորման և զարգացման գործընթացը:

Հետազոտության առարկան է վաղ մանկական աուտիզմ ունեցող երեխաների հաղորդակցման գործընթացը զարգացնող լոգոպեդական աշխատանքի ուղիները, միջոցները, մեթոդները:

Հետազոտության վարկածը ենթադրում է, որ վաղ մանկական աուտիզմ ունեցող երեխաների լոգոպեդական աշխատանքում հաղորդակցման գործընթացի զարգացումն արդյունավետ կլինի, հիմնվելով.

- վաղ մանկական աուտիզմ ունեցող երեխաների հաղորդակցման գործընթացի զարգացմանը նպաստող մի շարք նախադրյալների ուսումնասիրմանը՝ կառավարելի վարք, ոչ խոսքային և խոսքային հաղորդակցում,
- խոսքային և ոչ խոսքային գործընթացների առանձնահատկությունների հետազոտմանը,
- խոսքային և ոչ խոսքային ախտանիշների բնույթին և ծանրության աստիճանին,
- մեր կողմից առաջարկված և փորձարարությամբ հիմնավորված լոգոպեդական մեթոդների, միջոցների կիրառմանը ինչպես նաև հատուկ պայմանների ստեղծմանը:

Նպատակը, օբյեկտը, առարկան և աշխատանքային վարկածը սահմանում են հետազոտության հետևյալ խնդիրները.

1. ուսումնասիրել վաղ մանկական աուտիզմ ունեցող երեխաների, հաղորդակցման գործընթացը ձևավորող և զարգացնող ժամանակակից գիտամեթոդական մոտեցումները, որոնք կիրառվում են ընդհանուր և հատուկ մանկավարժության բնագավառներում և

մասնավորապես՝ լոգոպեդիայում, ինչպես նաև հոգեբանության և բժշկության ոլորտներում,

2. ուսումնասիրել վաղ մանկական աուտիզմ ունեցող երեխաների խոսքային և ոչ խոսքային հաղորդակցման առանձնահատկությունները,

3. մշակել լոգոպեդական միջոցներ և մեթոդներ, ստեղծել հատուկ պայմաններ՝ ձևավորելու և զարգացնելու վաղ մանկական աուտիզմ ունեցող երեխաների հաղորդակցման գործընթացը, և փորձարարությամբ հիմնավորել վաղ մանկական աուտզիմ ունեցող երեխաների հետ լոգոպեդական աշխատանքներում իրականացվող առաջարկված մոտեցումների արդյունավետությունը:

Հետազոտության համար մեթոդաբանական հիմք են հանդիսացել.

- հոգեբանության և մանկավարժության մեջ մտածողության և խոսքի միասնության վերաբերյալ (Լ.Ս.Վիգոտսկու, 1984; 1996; 2000), (Ս.Լ.Ռուբինշտեյնի, 1989ա,բ), (Ա.Ռ.Լուրիայի, 1973; 1979), (Ո.Ի.Լուբովսկու, 1978), (Ա.Ա.Լեոնտեվի, 1965, 1969; 1969; 1974; 1976, 1984), (Ն.Ի.Ժինկինի, 1958; 1982) դրույթները,
- Մ.Ի.Լիսինայի հետազոտությունները, համաձայն որոնց հաղորդակցումը որոշիչ գործոն է, որը ներազդում է հոգեկան զարգացման վրա (1986),
- Օ.Լ.Լովասի հաղորդակցման հմտություններն ամրապնդող կիրառական վարքային վերլուծության տեսությունը (2003),
- Պ.Յա.Գալպերինի գործողությունների և հասկացությունների ձևավորման փուլային տեսությունը (1965; 2007),
- վաղ մանկական աուտիզմը դիտարկվել է որպես հոգեկանի զարգացման ախտահարման տարատեսակ, որի կարևորագույն դրսևորումներից են հաղորդակցման դժվարությունները՝ պայմանավորված աֆեկտիվ անբավարարությամբ (Կ.Ս.Լեբեդինսկայա, Ի.Դ.Լուկաշովա, Ս.Վ.Նեմիրովսկայա, 1981, Օ.Ս.Նիկոլսկայա, Ե.Ռ.Բայենսկայա, Մ.Մ.Լիբլինգ, Ի.Ա.Կոստին, Մ.Յ.Վեդենինա, Ա.Վ.Արշատսկի, Օ.Ս.Արշատսկայա 2005):

Վերոնշյալ խնդիրներն իրագործելու նպատակով կիրառվել են **հետազոտման հետևյալ մեթոդները.**

- տեսական՝ հոգեբանամանկավարժական, մասնագիտական և մեթոդական գրականության, փորձարարական հետազոտության արդյունքների վերլուծություն, տվյալների համեմատում, ընդհանրացում, ամփոփում,
- էմպիրիկ՝ դիտում, զրույց, հարցում, անկետավորում, փորձարարական ուսուցում,
- վիճակագրական մեթոդներ՝ հետազոտության արդյունքների համեմատական վերլուծություն և մաթեմատիկական մշակում:

Հետազոտության գիտական նորույթն է.

- բացահայտվել են վաղ մանկական աուտիզմ ունեցող հայախոս երեխաների հաղորդակցման գործընթացի առանձնահատկությունները,
- որոշվել է հիմնախնդրի վերաբերյալ լոգոպեդների, հոգեբանների, ՀՊՄՀ-ի Հատուկ կրթության (ներկայիս՝ հատուկ և ներառական կրթության) ֆակուլտետի ուսանողների, ինչպես նաև վաղ մանկական աուտիզմ ունեցող երեխաների ծնողների իրազեկվածությունը,

- փորձարարությամբ ուսումնասիրվել և վերլուծվել են վաղ մանկական աուտիզմ ունեցող երեխաների խոսքային և ոչ խոսքային հաղորդակցման գործընթացի առանձնահատկությունները, որպես լոգոպեդական աշխատանքի արդյունավետությունը ապահովող նախադրյալներ,
- մշակվել և գործնականում ներդրվել են վաղ մանկական աուտիզմ ունեցող երեխաների հաղորդակցման զարգացմանը նպաստող լոգոպեդական աշխատանքի ուղիներ, միջոցներ, մեթոդներ և դրանց արդյունավետ կիրառման մանկավարժական պայմաններ, որոնք նպաստում են հաղորդակցման գործընթացի զարգացմանը,
- մշակվել են վաղ մանկական աուտիզմ ունեցող երեխաների հաղորդակցման գործընթացի ձևավորմանն ու զարգացմանն ուղղված մայրենի լեզվով հատուկ հանձնարարություններ, իրավիճակներ, խաղեր, վարժություններ, առաջադրանքներ:

Պաշտպանությանը ներկայացվող հիմնական դրույթներն են.

1. Վաղ մանկական աուտիզմ ունեցող երեխաներին բնորոշ է ինքնատիպ խոսքային և ոչ խոսքային խանգարումները, ինչն էլ խոչընդոտում է հաղորդակցման կարողությունների ձևավորմանն ու զարգացմանը:
2. Հաղորդակցմանը խոչընդոտող խոսքային և ոչ խոսքային բազմաբնույթ խնդիրները հիմք ընդունելով անհրաժեշտություն է առաջանում մշակել վաղ մանկական աուտիզմ ունեցող երեխաների հաղորդակցման գործընթացի ձևավորմանն ու զարգացմանը նպաստող լոգոպեդական աշխատանքի օրինակելի համակարգ:
3. Վաղ մանկական աուտիզմ ունեցող երեխաների խոսքային և ոչ խոսքային գործընթացների ձևավորմանն ու զարգացմանը միտված լոգոպեդական աշխատանքի օրինակելի համակարգը, ներդրված մանկավարժական միջոցները, մեթոդները և առաջարկված մանկավարժական պայմանները նպաստում են հաղորդակցման կարողությունների ձևավորմանը և զարգացմանը:

Հետազոտության տեսական նշանակությունը: Տեսականորեն հիմնավորվել են վաղ մանկական աուտիզմ ունեցող երեխաների հաղորդակցման զարգացմանը նպաստող առաջարկվող մանկավարժական մոտեցումների և դրանց կիրառման ուղիների արդյունավետությունը: Փորձարարական ճանապարհով ստացված արդյունքները հատուկ մանկավարժությունը կարող են հարստացնել վաղ մանկական աուտիզմ ունեցող երեխաների հաղորդակցման գործընթացի զարգացմանը վերաբերող նոր գիտատեսական մոտեցումներով:

Հետազոտության գործնական նշանակությունը որոշվել է վաղ մանկական աուտիզմ ունեցող երեխաների հաղորդակցման զարգացմանը նպաստող միջոցների, հնարների, մեթոդների, մոտեցումների, ինչպես նաև մայրենի լեզվով կազմված խաղերի, առաջադրանքների, հանձնարարությունների մշակմամբ, համակարգմամբ և գործնականում դրանց ներդրմամբ: Ատենախոսության նյութերն ու մեթոդական մոտեցումները կարող են օգտակար լինել մանկավարժական բուհերի սկզբնական կրթության և հատուկ կրթության ֆակուլտետների ուսանողների, մագիստրոսների, դասախոսների, լոգոպեդական գործունեություն իրականացնող մասնագետների, այդ երեխաների ընտանիքների համար, ինչպես նաև մանկավարժական վերապատրաստումներ իրականացնելիս:

Հետազոտության արդյունքների հավաստիությունն ու հիմնավորվածությունն ապահովված են հետազոտվող քանակակազմի բավարար ծավալով, հետազոտության ժամանակակից մեթոդների գործածությամբ, փաստացի նյութի քանակական և որակական վերլուծությամբ, հետազոտության արդյունքներով և լոգոպեդական պրակտիկայում դրանց ներդրումով: Հետազոտության արդյունքների հավաստիությունն ու հիմնավորվածությունը որոշվում է նաև հեղինակի հրատարակումներով, ելույթներով և աշխատանքի արդյունքների լայն քննարկումներով:

Հետազոտության արդյունքների պաշտոնական քննարկումն անցկացվել է Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ-ի հատուկ մանկավարժության (ներկայիս՝ լոգոպեդիայի և վերականգնողական թերապիայի) ամբիոնի նիստերում, գիտամեթոդական կոնֆերանսներում (2009-2014թթ.), ինչպես նաև Երևան քաղաքի «Երեխաների զարգացման միջազգային կենտրոնի», Երևանի խոսքի ծանր խանգարումներ ունեցող երեխաների թիվ 8 հատուկ դպրոցի մանկավարժական խորհրդի նիստերում: Այն քննարկվել է նաև «Կրթության ազգային ինստիտուտում», «Մարի Իզմիրլյանի անվան մանկատան», «Նոր Խարբերդի մասնագիտացված մանկատան» և Գյումրու «Երեխաների տուն» մանկատան ՊՈԱԿ-ներում, մասնագետների վերապատրաստման համար նախատեսված սեմինարներում:

Ատենախոսության կառուցվածքը և ծավալը: Ատենախոսական աշխատանքը շարադրված է համակարգչային բնագրի 150 էջերում: Այն կազմված է ներածությունից, 3 գլխից, եզրակացություններից, օգտագործված գրականության ցանկից, հավելվածից: Ատենախոսության բնագիրը պարունակում է 8 աղյուսակ, 10 տրամագիր, 7 գծապատկեր, 5 հավելված:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ներածության մեջ հիմնավորված է հետազոտության արդիականությունը, սահմանված են նպատակը, օբյեկտը, առարկան, խնդիրները, գիտական վարկածը, մեթոդաբանական հիմքերը, մեթոդները, գիտական նորույթը, տեսական և գործնական նշանակությունը, պաշտպանությանը ներկայացվող դրույթները:

Ատենախոսության **առաջին**՝ «**Հիմնախնդրի դրվածքը, հետազոտության խնդիրները, մեթոդները և կազմակերպումը**» խորագրով գլուխը կազմված է չորս ենթագլխից:

Առաջին՝ «**Վաղ մանկական աուտիզմի մեկնաբանման ժամանակակից տեսանկյունները**» ենթագլխում, դիտարկվել և վերլուծվել են վաղ մանկական աուտիզմի մասին հիմնական տեսություններն ու հայեցակարգային մոտեցումները: Կատարված մեկդարյա հետազոտությունների արդյունքում դիտարկվել և վերլուծվել են վաղ մանկական աուտիզմի էությունը՝ առկա ախտորոշման համակարգերը, հիմնական և երկրորդային ախտաբանական խնդիրները, պատճառագիտությունը:

Հաստատված է, որ ուսումնասիրվող հիմնահարցն արդիական է, ունի տեսագործնական և սոցիալական կարևոր նշանակություն, սակայն հատուկ

մանկավարժության մեջ այն գրեթե ուսումնասիրված չէ խոսքի և հաղորդակցման գործընթացի կարողությունների զարգացման տեսանկյուններից:

Երկրորդ՝ «**Վաղ մանկական աուտիզմ ունեցող երեխաների բժշկահոգեբանամանկավարժական դասակարգման համակարգերը**» ենթագլխում հիմք ընդունելով աուտիզմի բազմազան դրսևորման փաստը՝ վերլուծվել է մասնագիտական գրականության մեջ հիշատակվող կլինիկական և հոգեբանամանկավարժական դասակարգման համակարգերը:

Երրորդ՝ «**Վաղ մանկական աուտիզմ ունեցող երեխաների խոսքի զարգացման հաղորդակցման առանձնահատկությունները**» խորագրով ենթագլխում համեմատական վերլուծության է ենթարկված խոսքային և ոչ խոսքային հաղորդակցման կարողությունների ձևավորումն ու զարգացումը օնտոգենեզի և դիզօնտոգենեզի տեսանկյուններից:

Փաստվում է, որ աուտիզմի ամենաէական դրսևորումը հաղորդակցման պահանջի անկումն է կամ բացակայությունը: Ընդ որում աուտիզմ ունեցողները աչքի են ընկնում հարաճուն բնույթի խոսքային և ոչ խոսքային շփումների թուլացմամբ կամ բացակայությամբ, որոնք արտահայտվում են՝ խոսքի, լեզվի օրինաչափությունների և ոչ խոսքային շփումների խանգարումներով:

Առաջին գլխի չորրորդ՝ «**Հետազոտության տեսական հիմնավորումը, խնդիրները, մեթոդներն ու կազմակերպումը**» ենթագլխում ներկայացված են հետազոտության մասնավոր խնդիրները, մեթոդները և անցկացման փուլերը: Հայտնի է, որ վաղ մանկական աուտիզմը համարվում է ոչ միայն մանկական տարիքի հիմնախնդիր, երբ դիտվող դժվարությունները տարիների զուգընթաց ամբողջությամբ չեն վերանում, այլև պահպանվում են և փոփոխվում են միայն իրենց դրսևորման ձևերը: Լիարժեք ապաքինում դեռևս անհնար է իրականացնել, սակայն, դիտարկումները փաստում են, որ լոգոպեդական շտկողազարգացնող աշխատանքների հետևանքով այս երեխաները ժամանակի ընթացքում ենթարկվում են սոցիալական հարմարողականության:

Ըստ վերը շարադրվածի՝ հիմնահարցը կարևորվում է վաղ մանկական աուտիզմ ունեցող երեխաների խոսքի և հաղորդակցման կարողությունների ձևավորմանն ու զարգացմանն ուղղված մեթոդների, միջոցների, հնարների մշակմամբ, պայմանների ընտրությամբ, համակարգմամբ և փորձարարական հիմնավորմամբ:

Ատենախոսության երկրորդ՝ «Վաղ մանկական աուտիզմ ունեցող երեխաների խոսքի և հաղորդակցման առանձնահատկությունների հետազոտություն» խորագրով գլուխը կազմված է վեց ենթագլխից:

Երկրորդ գլխի առաջին՝ **«Վաղ մանկական աուտիզմ ունեցող երեխաների հաղորդակցման ձևավորմանն ուղղված լոգոպեդական աշխատանքի առանձնահատկությունների վերաբերյալ սոցիոլոգիական հարցում»** ենթագլուխը նվիրված է խնդրո առարկայի շուրջ լոգոպեդների, հոգեբանների, ուսանողների, վաղ մանկական աուտիզմ ունեցող երեխաների ծնողների իրազեկության ուսումնասիրմանը: Անկետավորում, հարցում և զրույց է անցկացվել, որին մասնակցել են 34 հոգեբան, 31 լոգոպեդ, 73 ուսանող, վաղ մանկական աուտիզմ ունեցող երեխաների 28 ծնող:

Սոցիարցման արդյունքները ցույց տվեցին, որ հայ հասարակության մեջ վաղ մանկական աուտիզմի հիմնահարցը և, մասնավորապես, այս երեխաների մոտ առկա

խոսքային խանգարումները, հաղորդակցման դժվարությունները ոչ միայն դեռևս լիարժեք լուսաբանված չեն, այլև ախտորոշման համակարգերն ու ժամանակակից լոգոպեդական ներազդեցության եղանակների իմացությունը բավականին ցածր մակարդակի վրա են գտնվում: Այս հանգամանքը փաստվել է նաև հարցմանը մասնակցած հոգեբանների կողմից: Վերջիններիս (100%) կարծիքով վաղ մանկական աուտիզմի հիմնախնդիրը լոգոպեդական և մանկավարժական տեսանկյունից ոչ բավարար չափով է լուսաբանված: Միևնույն ժամանակ մասնագիտացված կենտրոնների լոգոպեդների 84%-ը և հանրակրթական ու հատուկ դպրոցների լոգոպեդների 90%-ը փաստել են, որ չկան խնդրո առարկայի շուրջ մայրենի լեզվով մշակված լոգոպեդական աշխատանքի մեթոդական ուղեցույցներ և ձեռնարկներ: Վերջիններիս դերը կարևորվել է նաև սոցիարցմանը մասնակցած բոլոր ծնողների (100%) կողմից: Ուսանողների շրջանում իրականացված իրազեկության ուսումնասիրությունը թույլ է տալիս նշել, որ վերջիններիս 80%-ը ծանոթ չէ վաղ մանկական աուտիզմի ախտորոշման համակարգի, ինչպես նաև կիրառվող ժամանակակից որևէ շտկողազարգացնող մեթոդների վերաբերյալ:

Այսպիսով՝ տվյալ հետազոտության արդյունքները թույլ են տալիս փաստելու, որ մասնագետների շրջանում առկա է տեղեկատվության պակաս կիրառվող մոտեցումների վերաբերյալ: Հետևաբար վաղ մանկական աուտիզմ ունեցող երեխաների լոգոպեդական աշխատանքների առանձնահատկությունների վերաբերյալ միջոցների, հնարների, մեթոդական մոտեցումների մշակումը կնպաստի այս երեխաների հաղորդակցման կարողությունների ձևավորմանն ու զարգացմանը:

Երկրորդ՝ **«Վաղ մանկական աուտիզմ ունեցող երեխաների վարքային ոլորտի առանձնահատկությունների հետազոտություն»** ենթագլխում ներկայացված են այս երեխաների նստելու, ենթարկվելու կարողությունների, ագրեսիվության դրսևորման ձևերի վերաբերյալ հավաստող փորձարարական հետազոտության արդյունքները:

Հավաստող փորձարարական հետազոտությունը, որին մասնակցել է 4-7 տարեկան նախադպրոցական և դպրոցական տարիքի «Մանկական աուտիզմ» ախտորոշմամբ 80 երեխա, իրականացվել է մեր կողմից մշակված խոսքի հետազոտման քարտի միջոցով:

Հետազոտության արդյունքները փաստում են, որ այս երեխաների միայն 25%-ն էր կարողանում համապատասխան «Նստի՛ր» հրահանգի դեպքում տևական նստել: Հետազոտվող երեխաների 17,5%-ն էր ենթարկվելու համատեքստում ընկալում և կրկնօրինակում ցուցադրված պարզ գործողությունների 70%-ը: Ընդ որում միջին և բարդ գործողությունները հետազոտությանը մասնակից 80 (100%) վաղ մանկական աուտիզմ ունեցող երեխաներից և ոչ մեկի մոտ չէր կրկնօրինակվում: Ինքնաագրեսիայի երևույթներ դիտվում էր հետազոտվող երեխաների 75%-ի մոտ, իսկ դիմացինի նկատմամբ ագրեսիա ցուցաբերում էր նրանց 67,5%-ը:

Փաստենք, որ նստելու, ենթարկվելու կարողությունների, ինչպես նաև ագրեսիվության և ինքնաագրեսիայի նմանատիպ դրսևորումները խոչընդոտում են վաղ մանկական աուտիզմ ունեցող երեխաների խոսքի և հաղորդակցման կարողությունների ձևավորմանն ու զարգացմանը ուղղված լոգոպեդական աշխատանքների իրականացմանը:

Երրորդ՝ **«Վաղ մանկական աուտիզմ ունեցող երեխաների հայացքով հաղորդակցվելու առանձնահատկությունների հետազոտություն»** ենթագլխում

ներկայացված է հայացքով հաղորդակցվելու առանձնահատկությունների վերաբերյալ հավաստող փորձարարական հետազոտության արդյունքները:

Հայացքով հաղորդակցման առկայությունը և տևողությունը ստուգվել են «Նայի՛ր ինձ», «Նայի՛ր առարկային», «Նայի՛ր շարժվող առարկային» հրահանգների օգնությամբ և երեխայի արձագանքից կախված համապատասխան ժամանակի գրանցմամբ: Հայացքով հաղորդակցվելու կարողությունը (մասնագետի և երեխայի միջև) առկա էր հետազոտվող վաղ մանկական աուտիզմ ունեցող երեխաների 25%-ի մոտ, իսկ հայացքով առարկային նայելու կարողությունը պահպանված էր նրանց միայն 13,75%-ի մոտ: Փաստենք, որ շարժվող առարկային նայելու կարողությանը արձագանքել է հետազոտվող երեխաների միայն 10%-ը, իսկ հայացքի միջոցով անվանն արձագանքում էին նրանց 13,75%-ը:

Նշենք, որ հայացքով հաղորդակցման վերոնշյալ խանգարումները առավել են խոչընդոտում վաղ մանկական աուտիզմ ունեցող երեխաների խոսքի և հաղորդակցման կարողությունների ձևավորմանն ու զարգացմանը:

Չորրորդ՝ **«Վաղ մանկական աուտիզմ ունեցող երեխաների իմպրեսիվ խոսքի առանձնահատկությունների հետազոտություն»** ենթագլխում ներկայացված է վաղ մանկական աուտիզմ ունեցող երեխաների իմպրեսիվ խոսքի հետազոտությունը, որն իրականացվել է երկու եղանակով՝ իրականության համատեքստում և իրականության համատեքստից դուրս: Մեր կողմից մշակված խոսքի հետազոտման քարտի միջոցով ուսումնասիրել ենք ձևաբանության ելակետ հանդիսացող բառի ընկալումն ըստ հետևյալ խոսքի մասերի՝ գոյական, բայ, ածական, կապ, դերանուն, թվական: Հետազոտության արդյունքների վերլուծությունը փաստում է, որ այս երեխաների միայն 21,25%-ն էր ընկալում ցուցադրված գոյականների 15%-ը: Նրանց միայն 10%-ը ընկալում էր ցուցադրված գործողությունների 8%-ը, և ածականների 3%-ը, 6,25%-ը տարբերակում էր միայն «քո» դերանունը, 2,5%-ը տարբերակում էր միայն «վրա» կապը (տրամագիր 1):



Տրամագիր 1. Հետազոտվող վաղ մանկական աուտիզմ ունեցող երեխաների կողմից խոսքի մասերն ընկալելու կարողության մակարդակը

Հետազոտվողների կողմից բացակայում էր թվականների ընկալումը և տարբերակումը, հետևաբար, նաև՝ թվաբանական գործողությունների կատարման կարողությունը:

Այսպիսով, փաստենք, որ ակնհայտ դիտվող ընկալման խանգարումները և սահմանափակ պասիվ բառապաշարը նպաստում է վաղ մանկական աուտիզմ ունեցող երեխաների կլինիկական պատկերի և արտաքին աշխարհի հետ ունեցած հարաբերությունների անջրպետի խորացմանը:

Հինգերորդ՝ **«Վաղ մանկական աուտիզմ ունեցող երեխաների էքսպրեսիվ խոսքի առանձնահատկությունների հետազոտություն»** ենթագլխում ուսումնասիրվել և վերլուծվել է ակտիվ բառապաշարի առկայությունը, վերջինիս որակական նկարագիրը, ինչպես նաև արտաբերական շարժումներ նմանակելու կարողությունը:



Տրամագիր 2. Վաղ մանկական աուտիզմ ունեցող երեխաների մոտ էքսպրեսիվ խոսքի առկայության ցուցանիշները

Էխոլալիաների առկայությունն ու բնույթը հաշվի առնելով, ինչպես նաև առաջարկելով արտաբերել խոսքային նյութը, հետազոտվող երեխաները բաժանվել են 2 խմբի՝ անխոս երեխաներ (61,25%) և վերբալ խոսք ունեցող երեխաներ (38,75%)(տրամագիր 2): Ընդ որում, հետազոտված երկրորդ խմբի՝ վերբալ խոսք ունեցող երեխաների 21,25%-ը խոսքում կիրառում էր միայն գոյականներ, իսկ նրանց 17,5%-ը՝ պարզ նախադասություններ կամ արտահայտություններ՝ կազմված 2-3 բառերից: Ինչը թույլ է տալիս դիտարկել այս երեխաներին որպես խոսքի ընդհանուր թերզարգացման II մակարդակ ունեցող երեխաներ, երբ խոսքային բառապաշարում գերակշռում են գոյականները, հազվադեպ՝ բայերը, բացակայում էր ածականների ու կապերի կիրառումը, նրանց 6,25%-ին բնութագրական էր «եմ» դերանվան փոխարեն «ես» դերանվան կիրառումը: Նշենք, որ այս երեխաների միայն 17,5%-ն էր կարողանում ըստ նմանակման կրկնօրինակել լոգոպեդի կողմից ցուցադրված արտաբերական օրգանների շարժումների 50%-ը:

Վերոնշյալ խնդիրները էլ ավելի են դժվարեցնում վաղ մանկական աուտիզմ ունեցող երեխաների հաղորդակցման գործընթացը՝ դարձնելով նրանց անկառավարելի և անհասկանալի:

Վեցերորդ՝ **«Վաղ մանկական աուտիզմ ունեցող երեխաների ոչ խոսքային և խոսքային հաղորդակցման միջոցների կիրառման առանձնահատկությունների հետազոտություն»** ենթագլխում ուսումնասիրվել է ոչ խոսքային (ժեստեր) և խոսքային հաղորդակցման միջոցների կիրառման կարողությունները, նրանց շփման շրջանակը ինչպես նաև այլընտրանքային հաղորդակցման այլ միջոցների՝ գրավոր խոսքի և նկարների միջոցով հաղորդակցվելու կարողությունները:

Հետազոտված երեխաների միայն 10%-ն էր կարողանում «Ուզո՞ւմ ես» հարցադրումից հետո տալ «Այո», իսկ 6,25%-ը՝ «Ոչ» պատասխանը: «Ցուցական» ժեստի կիրառումը առկա էր նրանց միայն 21,25%-ի մոտ: Իրենց ինքնազգացողությունը կարողանում էին արտահայտել միայն 2,5%-ը, իսկ նրանց 6,25%-ը կարողանում էր նկարագրել միայն սահմանափակ թվով գործողություններ: Հետազոտմանը մասնակցած բոլոր 80 (100%) վաղ մանկական աուտիզմ ունեցող երեխաներից ոչ մեկը իր անվանը չի տվել վերբալ խոսքով պատասխան:

Հետազոտմանը մասնակցած վաղ մանկական աուտիզմ ունեցող բոլոր երեխաների մոտ բացակայում էր նաև գրավոր խոսքի կիրառումը և նկարների միջոցով հաղորդակցվելու կարողությունը: Նշենք, որ համեմատաբար կառավարելի էին և հետաքրքրված անծանոթ մարդկանց շփումներով նրանց միայն 6,25%-ը:

Այսպիսով՝ հետազոտության արդյունքները ակնառու փաստում են, որ վաղ մանկական աուտիզմ ունեցող երեխաների հաղորդակցման գործընթացի ձևավորման և զարգացման նպատակով անհրաժեշտ է մշակել համապատասխան միջոցներ, մեթոդներ և դրանց կիրառման մանկավարժական մոտեցումներ:

Ատենախոսության երրորդ՝ «Վաղ մանկական աուտիզմ ունեցող երեխաների հաղորդակցման գործընթացը զարգացնող լոգոպեդական աշխատանքների առանձնահատկությունները և հիմնական ուղղությունները» խորագրով գլուխը բաղկացած է հինգ ենթագլխից: Այստեղ հանգամանորեն ներկայացված են երկամյա փորձարարական ուսուցման արդյունքները, որտեղ մասնակցություն են ունեցել 4-7 տարեկան 28 վաղ մանկական աուտիզմ ունեցող երեխաներ, որոնցից 14-ը՝ փորձարարական, 14-ը՝ ստուգողական խմբերում: Փորձարարական խմբում գտնվող երեխաների հաղորդակցման գործընթացի զարգացմանն ուղղված աշխատանքներն իրականացվել են խաղային և ուսուցման գործընթացներում մեր կողմից մշակված լոգոպեդական աշխատանքի օրինակելի համակարգի կիրառման միջոցով:

Երրորդ գլխի առաջին **«Վաղ մանկական աուտիզմ ունեցող երեխաների հաղորդակցման նախադրյալների ձևավորման և զարգացման մեթոդներն ու միջոցները»** ենթագլխում մեկնաբանված է մեր կողմից մշակված լոգոպեդական աշխատանքի օրինակելի համակարգը, որտեղ ներկայացված են այս երեխաների հաղորդակցման գործընթացի ձևավորման և զարգացման անհրաժեշտ նախադրյալները, ստեղծված հատուկ պայմանները, կիրառված մեթոդներն ու սկզբունքները (գծապատկեր 1):

Երրորդ գլխի երկրորդ **«Վաղ մանկական աուտիզմ ունեցող երեխաների վարքային ոլորտի խանգարումների հաղթահարման ուղիները»** ենթագլխում նկարագրված են մեր կողմից իրականացված աշխատանքները, որոնք ուղղված են եղել ձևավորելու տևական նստելու, ենթարկվելու (պարզ, միջին և բարդ գործողություններ նմանակելու) ինչպես նաև դիտվող ագրեսիայի և ինքնաագրեսիայի դրսևորումները մեղմելու կարողությունները: Իրականացված աշխատանքներում արձանագրված են դրական տեղաշարժեր, որոնք բարձրացնում են վաղ մանկական աուտիզմ ունեցող երեխաների հաղորդակցման գործընթացի զարգացմանն ուղղված լոգոպեդական աշխատանքների էֆեկտիվությունը (տրամագիր 3):



Գծապատկեր 1. Վաղ մանկական աուտիզմ ունեցող երեխաների հետ իրականացվող հաղորդակցման գործընթացը զարգացնող լոգոպեդական աշխատանքի օրինակելի համակարգը

Այսպես, եթե նախքան փորձարարական ուսուցումը մասնագետի կողմից հնչեցրած «Նստի՛ր» հրահանգը կատարում էր փորձարարական խմբում գտնվող վաղ մանկական աուտիզմ ունեցող երեխաների 21,42%-ը, ապա փորձարարական ուսուցումից հետո տվյալ խմբում նշված հրահանգը կատարող երեխաների թիվը աճել է 9-ով, կազմելով 85,71%:

Նշենք, որ ստուգողական խմբում այս ուղղությամբ ավելի ցածր ցուցանիշ է գրանցվել. այսպես, եթե մասնագետի կողմից հնչեցրած «Նստի՛ր» հրահանգը կատարում էր ստուգողական խմբում գտնվող վաղ մանկական աուտիզմ ունեցող երեխաների 28,57%-ը, ապա երկու տարի հետո՝ նրանց 50%-ը:



Տրամագիր 3. Փորձարկվողների կողմից ագրեսիվ դրսևորումների ցուցանիշների փոփոխությունները գիտափորձի տարբեր փուլերում

Երրորդ գլխի երրորդ **«Վաղ մանկական աուտիզմ ունեցող երեխաների հայացքով հաղորդակցվելու կարողության ձևավորման և զարգացման ուղիները»** ենթագլխում ներկայացված են մեր կողմից կիրառված հայացքով հաղորդակցվելու (մասնագետ-երեխա հայացքով հաղորդակցվելու, առարկային նայելու, շարժվող առարկային նայելու) ինչպես նաև հայացքի միջոցով անվանն արձագանքելու կարողությունների ձևավորմանն ու զարգացմանն ուղղված աշխատանքները:

Կատարված աշխատանքները փաստում են, որ ստուգողական խմբում ներառված վաղ մանկական աուտիզմ ունեցող երեխաները նկարագրված աշխատանքներում իրենց զարգացման ցուցանիշներով ետ են մնում փորձարարական խմբում ներառված իրենց հասակակիցներից:

Այսպես, եթե նախքան փորձարարական ուսուցումը և՛ փորձարարական, և՛ ստուգողական խմբերում վաղ մանկական աուտիզմ ունեցող երեխաներ միայն 14,28%-ն էին կարողանում արձագանքել իրենց անվանը, այն էլ միայն տեսողական կոնտակտի միջոցով, ապա փորձարարական ուսուցումից հետո փորձարարական խմբում այն գրանցվել է 78,57%, իսկ ստուգողական խմբում՝ 50%:

Աղյուսակ 1.

Փորձարկվողների խոսքային հաղորդակցման միջոցների զարգացման համեմատական ցուցանիշները

Հետազոտվող ցուցանիշներ		Փորձարարական խումբ (n=14)				Ստուգողական խումբ (n=14)			
		Գնահատման միավորները (բալ)				Գնահատման միավորները (բալ)			
		Մինչ գիտափորձը		Գիտափորձից հետո		Մինչ գիտափորձը		Գիտափորձից հետո	
	n / %	Վերբալ պատասխանի առկայություն	Վերբալ պատասխանի բացակայություն	Վերբալ պատասխանի առկայություն	Վերբալ պատասխանի բացակայություն	Վերբալ պատասխանի առկայություն	Վերբալ պատասխանի բացակայություն	Վերբալ պատասխանի առկայություն	Վերբալ պատասխանի բացակայություն
«Ուզո՞ւմ ես» հարցադրմանը «Այո» պատասխանի առկայություն	n	3	11	6	8	3	11	4	10
	%	21,42	78,57	42,85	57,14	21,42	78,57	28,57	71,42
«Ուզո՞ւմ ես» հարցադրմանը «Ոչ» պատասխանի առկայություն	n	1	13	5	9	2	12	2	12
	%	7,14	92,85	35,71	64,28	14,28	85,71	14,28	85,71
«Ուզում եմ», «Տուր» արտահայտությունների կիրառում	n	1	13	5	9	1	13	2	12
	%	7,14	92,85	35,71	64,28	7,14	92,85	14,28	85,71
«Չեմ ուզում» արտահայտության կիրառում	n	1	13	5	9	2	12	2	12
	%	7,14	92,85	35,71	64,28	14,28	85,71	14,28	85,71
Ինքնազգացողությունն արտահայտելու կարողություն	n	1	13	6	8	1	13	1	13
	%	7,14	92,85	42,85	57,14	7,14	92,85	7,14	92,85
Անվանը «Ինչ է» կամ «Այո» վերբալ արձագանքելու կարողություն	n	-	14	6	8	-	14	2	12
	%	-	100	42,85	57,14	-	100	14,28	85,71
Կատարված գործողությունների վերաբերյալ մեկնաբանություն կատարելու կարողություն	n	1	13	5	9	1	13	2	12
	%	7,14	92,85	35,71	64,28	7,14	92,85	14,28	85,71

Երրորդ գլխի չորրորդ՝ **«Վաղ մանկական աուտիզմ ունեցող երեխաների իմպրեսիվ և էքսպրեսիվ խոսքի զարգացման լոգոպեդական աշխատանքի ուղիները և փորձարարական հետազոտության արդյունքները»** խորագրով ենթագլխում մանրամասն ներկայացված և մեկնաբանված են լոգոպեդական աշխատանքի ուղղվածությունը՝ միտված խոսքի ընկալման և վերարտադրման կարողությունների ձևավորմանն ու զարգացմանը: Աշխատանքների կատարման հիմքում ընկած է եղել անվանված կամ երեխայի կողմից արտաբերվող բառի իմաստակրիչ հատկանիշի՝ խոսքի մասերի (գոյական, բայ, ածական, կապ, դերանուն, թվական) ճանաչման, տարբերկմանն ու արտաբերմանն ուղղված աշխատանքների իրականացումը: Փորձարարական հետազոտության արդյունքները փաստում են, որ իմպրեսիվ և էքսպրեսիվ խոսքի զարգացմանն ուղղված մեր կողմից կիրառված լոգոպեդական աշխատանքներն ունեն բարձր արդյունավետություն:

Երրորդ գլխի հինգերորդ **«Վաղ մանկական աուտիզմ ունեցող երեխաների խոսքային և ոչ խոսքային հաղորդակցման զարգացման ուղիները և առաջարկված մոտեցումների արդյունավետությունը»** խորագրում ներկայացված են երկամյա փորձարարական ուսուցման արդյունքները, որոնց համաձայն ստուգողական խմբի երեխաների մոտ արձանագրված ցուցանիշները զգալիորեն զիջում են փորձարարական խմբի երեխաների մոտ արձանագրված ցուցանիշներին բոլոր հետևյալ չափորոշիչներով՝ շփման շրջանակի ընդլայնում, ոչ վերբալ հաղորդակցում, վերբալ հաղորդակցում (աղյուսակ 1): Այս վերլուծությունը փաստում է մեր կողմից առաջարկվող խոսքային և ոչ խոսքային հաղորդակցման ուղիների ձևավորման և զարգացման միջոցների, մեթոդների, հնարների, մանկավարժական մոտեցումների արդյունավետությունը:

Այսպիսով՝ մեր կողմից իրականացված փորձարարության արդյունքները ապացուցեցին առաջադիր վարկածի հավաստիությունը և թույլ տվեցին կատարել հետևյալ **հետևությունները**.

1. Վաղ մանկական աուտիզմ ունեցող երեխաների հաղորդակցման գործընթացը բնութագրվում է ինքնատիպ դրսևորումներով, որոնք խոչընդոտում են նրանց հարմարողականացմանը և սոցիալականացմանը: Այս համատեքստում առավել կարևորվում է նրանց հետ իրականացվող լոգոպեդական աշխատանքի անհրաժեշտությունը, սակայն այս խնդրին ցայսօր պատշաճ ուշադրություն չի դարձվել: Գրեթե բացակայում են մայրենի լեզվով մշակված հատուկ հանձնարարությունները, վարժությունները, իրավիճակները, որոնք միտված են զարգացնելու վաղ մանկական աուտիզմ ունեցող երեխաների հաղորդակցման գործընթացը: Նշված երեխաների հետ լոգոպեդական աշխատանքները պետք է իրականացվեն գիտական ուսումնասիրությունների և դրանցում կիրառվող ուղիների, միջոցների, մեթոդների փորձարարական հիմնավորման ճանապարհով:

2. Խնդրո առարկայի շուրջ սոցհարցման արդյունքները վկայում են, որ մասնագիտացված կենտրոնների լոգոպեդների 84%-ը և հանրակրթական ու հատուկ դպրոցների լոգոպեդների 90%-ը, կարևորելով հատկապես մայրենի լեզվով հատուկ

խաղերի, հանձնարարությունների, վարժությունների մշակման անհրաժեշտությունը, փաստում են, որ բացակայում են մայրենի լեզվով մշակված վաղ մանկական աուտիզմ ունեցող երեխաների հաղորդակցման գործընթացը խթանող լոգոպեդական աշխատանքների իրականացման գիտամեթոդական ձեռնարկները, ուղեցույցները:

3. Ատենախոսության մեջ ներկայացված են նոր մոտեցումներ, որոնք միտված են վաղ մանկական աուտիզմ ունեցող երեխաների հաղորդակցման գործընթացի արդյունավետ զարգացմանը: Կատարված գիտահետազոտական աշխատանքը թույլ է տալիս դրական գնահատել վաղ մանկական աուտիզմ ունեցող երեխաների հետ մեր կողմից կազմակերպված լոգոպեդական աշխատանքի ուղղությունները՝

- ենթարկման կարողության ձևավորում և զարգացում,
- հայացքի միջոցով հաղորդակցման կարողության ձևավորում և զարգացում,
- իմպրեսիվ և էքսպրեսիվ խոսքի ձևավորում և զարգացում,
- խոսքային և ոչ խոսքային հաղորդակցման միջոցների ձևավորում և զարգացում:

Նշված ուղղություններով մշակված է լոգոպեդական աշխատանքի օրինակելի համակարգ, ներկայացված են իրավիճակներ, հանձնարարություններ, վարժություններ, առաջադրանքներ, խաղեր և դրանց անցկացման մեթոդական մոտեցումներ: Ատենախոսության մեջ հիմնավորված է դրանց կիրառման լայն հնարավորությունը:

4. Փորձարարությունում ներդրված իմպրեսիվ խոսքը զարգացնող առաջարկվող մոտեցումները վաղ մանկական աուտիզմ ունեցող երեխաներին թույլ տվեցին ուսումնասիրվող բոլոր խոսքի մասերում հասնել դրական արդյունքի, ինչը հնարավորություն է տալիս հավաստելու մշակված լոգոպեդական աշխատանքի օրինակելի համակարգի արդյունավետությունը և կիրառելիությունը: Այսպես, եթե նախքան փորձարարական ուսուցումը փորձարարական խմբում գտնվող երեխաների միայն 21,42%-ն էր ընկալում անվանված և ցուցադրված գոյականների 15%-ը, ապա փորձարարական ուսուցումից հետո 57,14%-ն արդեն ընկալում էր անվանված գոյականների 90%-ը:

5. Էքսպրեսիվ խոսքի զարգացման ուղղությամբ թիրախային խմբի երեխաների մոտ նույնպես արձանագրվել են զգալի դրական տեղաշարժեր, այսպես, եթե մինչ փորձարարական ուսուցումը այս երեխաների 21,42%-ն էր կարողանում վերարտադրել գոյականների 15%-ը, ապա փորձարարական ուսուցումից հետո 42,85%-ը վերարտադրում էր գոյականների 80%-ը: Դրական տեղաշարժեր արձանագրվել են նաև բոլոր խոսքի մասերի վերարտադրման ինչպես նաև երկխոսությունը սկսելու ու պահպանելու ուղղությամբ: Նշենք, որ եթե մինչ փորձարարական ուսուցումը փորձարարական խմբում ներառված վաղ մանկական աուտիզմ ունեցող երեխաներից ոչ մեկը վերբալ խոսքով չէր արձագանքում իր անվանը, ապա երկու տարի անց նրանց 42,85%-ը արդեն կարողանում էր արձագանքել:

Երկամյա փորձարարական ուսուցման արդյունքում ստացված քանակական և որակական արդյունքների վերլուծությունը թույլ է տալիս հաստատել մեր կողմից մշակված վաղ մանկական աուտիզմ ունեցող երեխաների հաղորդակցման գործընթացը զարգացնող լոգոպեդական աշխատանքի օրինակելի համակարգի կիրառման արդյունավետությունը:

Ատենախոսության հիմնական դրույթներն արտացոլված են հեղինակի հետևյալ **հրատարակումներում**.

1. Հունանյան Ն.Վ., Վաղ մանկական աուտիզմ ունեցող երեխաների խոսքի զարգացման առանձնահատկությունները, Հատուկ մանկավարժություն և հոգեբանություն գիտամեթոդական ժողովածու, 2009թ., №8, էջ 50-59:

2. Կարապետյան Ս.Գ., Հունանյան Ն.Վ., Վաղ մանկական աուտիզմով երեխաների հետ անցկացվող լոգոպեդական աշխատանքների առանձնահատկությունները, Պրոֆեսորադասախոսական անձնակազմի, ասպիրանտների, հայցորդների և գիտաշխատողների 54-րդ գիտաժողովի նյութեր, 2010թ., էջ 115-117:

3. Հունանյան Ն.Վ., Վաղ մանկական աուտիզմով երեխաների բժշկահոգեբանամանկավարժական դասակարգման համակարգերը, Մանկավարժություն գիտամեթոդական ամսագիր, ՀՀ ԿԳՆ Կրթության ազգային ինստիտուտ, 2012թ., №6, էջ 34-40:

4. Հունանյան Ն.Վ., Վաղ մանկական աուտիզմի մեկնաբանության ժամանակակից մոտեցումների վերլուծությունը, Հայաստանի գիտությունների ազգային ակադեմիա, Երեբունի բժշկական կենտրոն, 2013թ., № 4(56), էջ 10-16:

5. Հունանյան Ն.Վ., Վաղ մանկական աուտիզմ ունեցող երեխաների հաղորդակցման զարգացմանը նպաստող նախադրյալների նկարագիրը, Մխիթար Գոշ ուսումնամեթոդական հոդվածներ, 2016թ., էջ 303-306:

6. Հունանյան Ն.Վ., Վաղ մանկական աուտիզմ ունեցող երեխաների իմպրեսիվ խոսքի առանձնահատկությունների հետազոտություն, Հատուկ կրթության հիմախնդիրներ գիտամեթոդական հանդես, Խաչատուր Աբովյանի անվան ՀՊՄՀ, Երևան 2016, էջ 75-79:

7. Հունանյան Ն.Վ., Վաղ մանկական աուտիզմ ունեցող երեխաների հետ տարվող լոգոպեդական աշխատանքների առանձնահատկությունները, Մանկավարժություն գիտամեթոդական ամսագիր, ՀՀ ԿԳՆ Կրթության ազգային ինստիտուտ, 2016թ., №5, էջ 38-44:

УНАНЯН НЕЛЛИ ВАНИКОВНА

ОСОБЕННОСТИ ЛОГОПЕДИЧЕСКИХ РАБОТ В ПРОЦЕССЕ КОММУНИКАЦИИ У ДЕТЕЙ С РАННИМ ДЕТСКИМ АУТИЗМОМ

Диссертация на соискание ученой степени кандидата педагогических наук по специальности 13.00.01 «Теория и история педагогики» (Специальная педагогика).

Защита диссертации состоится 28 ноября 2019 г. в 12.00 ч. на заседании специализированного совета 020 «Педагогика» ВАК по присуждению ученых степеней при Армянском государственном педагогическом университете им. Х. Абовяна, по адресу: 0010, г. Ереван, ул. Тигран Меца 17.

РЕЗЮМЕ

Актуальность исследования. По данным Всемирной организации здравоохранения, число детей с аутизмом ежегодно увеличивается на 10-17 случаев.

Известно, что процесс коммуникации, характеризующийся специфическим и патологическим развитием, препятствующим социальной адаптации детей с ранним детским аутизмом, а также отсутствие желания общаться, проявляются у этих детей с раннего возраста и сохраняются на протяжении всей жизни.

По этой проблеме, имеющей столетнюю историю, появилось много интересных теоретических и практических работ, которые посвящены клиническим и психологическим аспектам аутизма в раннем детстве, а педагогические и методологические аспекты данной проблемы почти не изучены (М.Ю. Веденина, И.А. Костин, С.С. Морозова, О. Н. Окунева, 1998; А. В. Хаустов, 2005, Н. Петрова, 2010 и др.). Более того, на сегодняшний день практически отсутствуют исследования относительно особенностей логопедических работ, а также разработанные на родном языке специальные педагогические подходы, методы, инструменты для развития навыков общения у детей с ранним детским аутизмом. Вышеизложенное и определяет проблему исследования как весьма актуальную, имеющую важную теоретическую, практическую и социальную значимость.

Цель исследования - изучить особенности логопедической работы, направленной на формирование и развитие процесса коммуникации у детей, с ранним детским аутизмом, а также разработать логопедические средства, методы и создать специальные условия для проведения этой работы.

Задачи исследования:

1. изучить применяемые в общей и специальной педагогики и, в частности, в логопедии, а также в психологии и медицине, современные научно-методические подходы, формирующие и развивающие процесс коммуникации у детей с ранним детским аутизмом;
2. изучить особенности речевой и неречевой коммуникации у детей с ранним детским аутизмом;

3. разработать логопедические средства и методы, создать специальные условия для формирования и развития процесса коммуникации у детей с ранним детским аутизмом и экспериментально обосновать эффективность предложенных подходов в логопедических работах с детьми с ранним детским аутизмом.

Научная новизна исследования:

- выявлены особенности процесса коммуникации армяноязычных детей с ранним детским аутизмом;
- определена осведомленность о проблеме исследования логопедов, психологов, студентов факультета специального и инклюзивного образования АГПУ, а также родителей детей с ранним детским аутизмом;
- экспериментально изучены и проанализированы особенности вербальной и невербальной коммуникации у детей с ранним детским аутизмом, как предпосылки для обеспечения эффективности логопедической работы;
- разработаны и внедрены в практику пути, средства, методы логопедической работы, а также педагогические условия для их эффективного применения, способсвующие развитию процесса коммуникации у детей с ранним детским аутизмом,
- на армянском языке разработаны специальные задания, ситуации, игры, упражнения, направленные на формирование и развитие процесса коммуникации у детей с ранним детским аутизмом.

Теоретическая значимость исследования: Теоретически обоснована эффективность предложенных педагогических подходов и способов их применения для развития коммуникации у детей с ранним детским аутизмом. Результаты исследования могут обогатить специальную педагогику новыми научно-теоретическими сведениями, касающимися развития коммуникации у детей с ранним детским аутизмом.

Практическая значимость исследования: Разработаны, систематизированы и внедрены в практику логопедические средства, методы и подходы, а также специальные игры, упражнения и задания на армянском языке, способствующих развитию коммуникации у детей с ранним детским аутизмом. Материалы диссертации могут быть использованы студентами, магистрантами, преподавателями педагогических вузов, а также специалистами, осуществляющих развитие коммуникации у детей с ранним детским аутизмом. Материалы могут применятся и для педагогических тренингов.

Апробация результатов исследования. Апробация работы проводилась в форме обсуждений на заседаниях кафедр логопедии и восстановительной терапии, Специальной педагогики и психологии АГПУ им. Х. Абовяна.

Структура и объем диссертации. Диссертация изложена на 150 страницах компьютерного текста и состоит из введения, трех глав, заключения, списка использованной литературы и приложения. Текст диссертации содержит 8 таблиц, 10 диаграмм, 7 графических изображений, 5 приложений. По теме диссертации опубликовано 7 статей.

NELLI VANIK HUNANYAN

THE FEATURES OF SPEECHTHERAPY WORKS IN THE PROCESS OF COMMUNICATION OF CHILDREN WITH EARLY CHILDHOOD AUTISM

PhD thesis for the degree of candidate of pedagogical sciences in specialty 13.00.01 "Theory and History of Pedagogy" (Special Pedagogy).

The thesis will be defended on November 28, 2019 at 12.00 at a meeting of the specialized council 020 “Pedagogy” of the Higher Attestation Committee at the Armenian State Pedagogical University after Kh. Abovyan, at the address: 17 Tigran Mets ave., 0010 Yerevan.

ABSTRACT

The relevance of research. According to the World Health Organization, the number of children with autism is increasing annually by 10-17 cases.

It is known that the process of communication, characterized by a specific and pathological development that impedes the social adaptation of children with early childhood autism, as well as a lack of desire to communicate, appear in these children from an early childhood and persist throughout the whole life.

There are many interesting theoretical and practical works related to this problem with hundred-year history, but they are mainly devoted to the clinical and psychological aspects of autism in early childhood, while the pedagogical methodological approaches are almost not studied (M.Yu. Vedenina, I.A. Kostin, S.S. Morozova, O.N. Okuneva, 1998; A.V. Khaustov, 2005 and others).

Moreover, today there are practically no studies on the features of speech therapy work, as well as special pedagogical approaches, methods and tools developed in the mother tongue, for developing communication skills in children with early childhood autism. The abovementioned defines the research problem as very relevant, having important theoretical, practical and social significance.

The purpose of the research - to study the features of logopedic work aimed at the formation and development of the communication process of children with early childhood autism, as well as to develop speech therapy tools, methods and create special conditions for conducting this work.

Research Objectives:

1. to study modern scientific and methodological approaches that form and develop the communication process of children with early childhood autism, applied in the fields of general and special pedagogy and, in particular, in speech therapy, as well as in psychology and medicine;
2. to study the features of verbal and non-verbal communication of children with early childhood autism;

3. to develop speech therapy tools and methods, create special conditions for the formation and development of the communication process of children with early childhood autism and experimentally substantiate the effectiveness of the proposed approaches in speech therapy work with these children.

The scientific novelty of the research:

- the features of the communication process of Armenian-speaking children with early childhood autism have been revealed;
- awareness on the problem of the study of speech therapists, psychologists, students of the Faculty of Special and Inclusive Education of ASPU, as well as the parents of children with early childhood autism has been determined;
- the features of the verbal and nonverbal process in children with early childhood autism have been experimentally studied and analyzed as prerequisites for ensuring the effectiveness of speech therapy work;
- ways, means and methods of speech therapy work as well as pedagogical conditions for their effective application contributing to the development of the communication process of children with early childhood autism have been developed and implemented in practice;
- special tasks, situations, games, exercises aimed at the formation and development of the communication process of children with early childhood autism have been developed in Armenian language.

The theoretical significance of the research: The effectiveness of the proposed pedagogical approaches and methods of their application for the development of communication of children with early childhood autism is theoretically substantiated. The results obtained can enrich special pedagogy with new scientific and theoretical information regarding the development of communication of children with early childhood autism.

The practical significance of the research: Speech therapy tools, methods and approaches, as well as special games, exercises and tasks in Armenian language, contributing to the development of communication of children with early childhood autism, were developed, systematized and implemented in practice. The materials of the thesis can be used by students, undergraduates, lecturers of pedagogical universities, as well as specialists engaged in the development of communication of children with early childhood autism, as well as for pedagogical trainings.

Approbation of the results of the thesis. Testing of the work was carried out in the form of discussions at meetings in Chair of Speech Therapy and Rehabilitation Therapy, and Chair of Special Pedagogy and Psychology of ASPU after Kh. Abovyan.

The structure and scope of the thesis. The thesis is presented on 150 printed pages and consists of an Introduction, three Chapters, Conclusion, List of used literature and Appendix. The thesis contains 8 tables, 10 diagrams, 7 graphic images, 5 appendixes. 7 articles are published on the topic of the thesis.